ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
05.03.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*«ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ» ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ*

հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

| **1. Հասարակական կազմակերպության՝** | |
|---|---|
| 1.1 Լրիվ անվանումը | «ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ» ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ |
| 1.2 ՀՎՀՀ-ն | 01212788 |
| 1.3 Գտնվելու վայրը | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ԿՈՐՅՈՒՆԻ 19ա ՇԻՆ.7 |
| 1.4 Պետական գրանցման համարը | 211.171.01966 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | 2003-08-21 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | +(374)91405219 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | www.bridgeofhope.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | anahit-h@mail.ru |

| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
|---|---|---|
| Անունը | Ազգանունը | Պաշտոնը |
| ՍՈՒՍԱՆՆԱ | ԹԱԴԵՎՈՍՅԱՆ | նախագահ |

3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը

Կազմակերպության նպատակն է հասնել սոցիալական , տնտեսական և մշակութային ոլորտներում գոյություն ունեցող անհավասարությունների և խտրականության վերացմանը, որպեսզի հաշմանդամություն ունեցող երեխաներն ու երիտասարդները, այլոց հետ համահավասար հնարավորություններով, կարողանան իրացնել իրենց հիմնարար իրավունքներն ու ազատությունները և արժանապատվորեն ապրեն իրենց հայրենիքում :

| **4 Հասարակական կազմակերպության՝** | |
|---|---|
| 4.1 Անդամների թիվը | 169 |
| 4.2 Կամավորների թիվը | 120 |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | 1 |

**6. Իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ | ՀՀ տավուշի մարզի 5 քաղաքային և 57 գյուղական բնակավայրեր ՀՀ Տավուշի մարզի բոլոր հանրակրթական նախադպրոցական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համար ապահովել նրանց կրթության կազմակերպման աջակցող միջոցառումներ | ՀՀ Տավուշի մարզի բոլոր հանրակրթական նախադպրոցական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համար ապահովել նրանց կրթության կազմակերպման աջակցող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների հասանելիություն | Ավարտված |
| 2 | Կազմակերպության ֆինանսական կայունություն ապահովող ծրագիր | Երևան | ապահովել կազմակերպության ֆինանսական կայունություն | Ընթացքի մեջ |
| 3 | Սպորտը հանուն հավասար հնարավորությունների | ՀՀ Տավուշի մարզ , ք. Դիլիջան , Իջևան, Բերդ. Նոյեմբերյան | Տավուշի մարզում խթանել հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառումը ֆուտբոլի միջոցով | Ավարտված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Միջոլորտային երկխոսություն , հզորացում և գործողություններ Եվրոպայում երիտասարդների ներառման համար | Երևան | Ամրապնդել խոցելի խմբերի երիտասարդների ներառման հարցերին  ուղղված ջանքերը հնարավորություն տալով և տարածելով միջոլորտային համագործակցությունը | Ընթացքի մեջ |
| 5 | Նոյեմբերյան խոշորացված համայնքում իրականացվող սոցիալական միջոցառումների ծրագիր | Տավուշի մարզ , Ք. նոյեմբերյան | Կենտրոնի պահպանման , կոմունալ , կենցաղային վճարների և տրանսպորտային ծախսերի ապահովումը | Ընթացքի մեջ |
| 6 | Իջևան խոշորացված համայնքում իրականացվող սոցիալական միջոցառումների ծրագիր | Տավուշի մարզ , Ք.Իջևան | Ապահովվել կենտրոնում հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը | Ավարտված |
| 7 | Որբան Կայուն զարգացման հիմնադրամ | Տավուշի մարզ , Ք.Իջևան | Նպաստել Իջևան համայնքի 18 բնակավայրերի 10-18 տարեկան հաշմանդամություն, կրթության առանձնահատուկ օայմանների կարիք ունեցող  և կյանքի դժվարի  իրավիճակներում հայտնված 40 երեխաների և երիտասարդների կարողությունների հզորացմանը , պահպանելու և տարածելու հայկական մշակույթի արժեքներն ու նկարագիրը | Ավարտված |
| 8 | 2023թ.ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիր | Տավուշի մարզ , Ք. Բերդ | Աշխատանքային փորձի ձեռքբերում | Ավարտված |
| 9 | 2023թ.ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիր | Տավուշի մարզ , Ք.Իջևան | Աշխատանքային փորձի ձեռքբերում | Ավարտված |
| 10 | «ԿԱՄՈՒՐՋ» ներառական թատրոն-ստուդիա | Երևան | Հաշմանդամություն ունեցող և չունեցող պատանիների շրջանում ամրապնդել գիտելիքներն ու հարգանքը մարդու իրավունքների, ժողովրդավարության, սոցիալական հավասարության և արդարության նկատմամբ | Ավարտված |
| 11 | «ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» | ՀՀ տավուշի մարզի Իջևան, Դիլիջան , Բերդ , Նոյեմբերյան քաղաքներ | Խթանել հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառումը ՀՀ Տավուշի մարզում | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մանկավարժահոգեբանական  աջակցության ծառայություններ | ՀՀ տավուշի մարզի 5 քաղաքային և 57 գյուղական բնակավայրեր | Ավարտված | ՀՀ Տավուշի մարզի բոլոր հանրակրթական նախադպրոցական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների  կարիք ունեցող երեխաների կրթության համար ապահովվել նրանց կրթության կազմակերպման աջակցող մանկավարժահոգեբանական  աջակցության ծառայությունների հասանելիությունը | Ծառայություններից օգտվել են ընդհանուր թվով 520 երեխաներ նախադպրոցական տարիքի 91 երեխա, \հուհ երում սովորող 421 երեխա: Նրանց տրամադրվել են մանկավարժական, հոգեբանականնև սոցիալական ներառմանն օժանդակող ծառայություններ, ինչպես ուսումնական հաստատություններում , այնպես էլ կազմակերպության կենտրոնում |
| 2 | Նոյեմբերյան խոշորացված համայնքում իրականացվող սոցիալական միջոցառումների  ծրագիր | Տավուշի մարզ , Ք.Նոյեմբերյան | Ընթացքի մեջ | Կենտրոնի պահպանման , կոմունալ, կենցաղային վճարների և տրանսպորտային ծախսերի ապահովումը | Աջակցել համայքի ընտանիքներին , կանանց , երեխաներին |
| 3 | Իջևան խոշորացված համայնքում իրականացվող սոցիալական միջոցառումների ծրագիր | Տավուշի մարզ , Ք. Իջևան | Ավարտված | Ապահովվել կենտրոնում հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը | Աջակցել համայնքի ընտանիքներին , կանանց , երեխաներին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | 2023թ.ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիր | Տավուշի մարզ , Ք. Բերդ | Ավարտված | Աշխատանքային փորձի ձեռքբերում | Ապահովել կայուն մասնագիտական աշխատանքով |
| 5 | 2023թ.ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիր | Տավուշի մարզ , Ք.Իջևան | Ավարտված | Աշխատանքային փորձի ձեռքբերում | Ապահովել կայուն մասնագիտական աշխատանքով |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 266,717,986 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 266,717,986 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 142,278,800 | Հայաստանի Հանրապետության կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն |
| 2 | 300,000 | Նոյեմբերյանի համայնք |
| 3 | 627,750 | Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական նախարարության միասնական սոցիալական ծառայության Իջևանի տարածքային կենտրոն |
| 4 | 540,250 | Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական նախարարության միասնական սոցիալական ծառայության Բետարածքային կենտրոն |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 143,746,800 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 259,683,305 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 259,683,305 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 143,757,800 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 143,757,800 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |
| Նշումներ | | | |
| | | | |

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________2________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________________

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրություն, անունը, ազգանուն

Audit ARMENIA

## Անկախ աուդիտորական եզրակացություն

**««Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության» Հասարակական Կազմակերպության կառավարման մարմիններին**

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ««Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության» Հասարակական Կազմակերպության 2024թ. գործունեության հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը՝ (այսուհետև Հաշվետվություն):

Մեր կարծիքով, ««Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության» Հասարակական Կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով, բոլոր էական առումներով տալիս է դրամական միջոցների մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը 2024թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար, «Հասարակական Կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

### Կարծիքի հիմքը

Աուդիտն անցկացվել է Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար» բաժնում: Աուդիտորն անկախ է Հասարակական Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պարտավոր է պահպանել ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում աուդիտին վերաբերող էթիկայի այլ պահանջները: Աուդիտի ընթացքում ձեռք է բերվել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ կարծիք արտահայտելու համար:

### Հաշվետվության համար Կազմակերպության Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Կազմակերպության Ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, դրամական միջոցների մուտքի և ելքի օրինականությունը, և օգտագործման գործընթացները:

Կազմակերպության Ղեկավարությունը պատասխանատու է նշված հաշվետվությունը կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է սխալի կամ խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվություն

կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանումը, կիրառումը և պահպանումը:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Կազմակերպության Հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

26 մայիսի 2025թ.

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» «AUDIT ARMENIA» «АУДИТ АРМЕНИЯ» 01569467

Digitally signed by TADEVOSYAN SUSANNA 6310590170
Date: 2025.05.29 15:34:27 AMT

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.05.2025 15:29